ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

25 ՄԱՐՏԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ճաղարյանը, Անուշ Ղուկասյանը, Շահնուր Շուշանյանը, Անդրանիկ Նիկողոսյանը, Աշոտ Գագյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Վան Գաբրիելյան, Լուսինե Մարկոսյան, Կարեն Մխիթարյան, Համլետ Արամյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Ստեփանյանը

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 25.03.2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների պահանջներով.

Հաստատել Ճամբարակ համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 25.03.2025թ. 2-րդ հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ
2. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՍԵՓ ԲՈՋԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ԱՎՏՈՏՆԱԿԸ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՒԲԻԿ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ՄԱՌԱՆ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
9. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
10. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ
11. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
12. ՏՈՌՆԱԴՈ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԵԾԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՐՁԱՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
13. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
14. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՁԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
15. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
16. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
17. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ և 76-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աճուրդ-վաճառքով տրամադրել
   1.1 Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքին սեփականության իրավունքով պատկանող՝

ա/ 05-002-0049-0005 կադաստրային ծածկագրով, Գարդմանի փողոց, թիվ 21 հասցեում գտնվող 0.1 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը, որի մեկնարկային գինը կազմում է 400000 /չորս հարյուր հազար /ՀՀ դրամ:

բ/ 05-002-0079-0103 կադաստրային ծածկագրով, Տ. Մեծի փողոց, թիվ 4/4 հասցեում գտնվող 0.0045 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը, որի մեկնարկային գինը կազմում է 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

գ/ 05-002-0079-0104 կադաստրային ծածկագրով 0.0045 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը, որի մեկնարկային գինը կազմում է 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

դ/ 05-002-0079-0105 կադաստրային ծածկագրով 0.0045 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը, որի մեկնարկային գինը կազմում է 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

ե/ 05-002-0079-0106 կադաստրային ծածկագրով 0.0045 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը, որի մեկնարկային գինը կազմում է 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Վարձակալության իրավունքով տրամադրել՝
   2.1 Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրին սեփականության իրավունքով պատկանող՝
   ա/05-032-0209-0025 կադաստրային ծածկագրից առանձնացված 5.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և 4-րդ կետի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի կետի 21-րդ մասով, ՀՀ Կառավարության 14 հունվարի 2010թ. 16-Ն որոշման 3-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքում գտնվող, Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը տրամադրելու վարձակալության իրավունքով.

ա/05-063-0742-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 15.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

բ/05-063-0742-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 10.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

գ/05-032-0608-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 5.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 25000 /քսանհիգ հազար/ ՀՀ դրամ:

դ/05-063-0718-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 10.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

ե/05-063-0742-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 5.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

զ/05-063-0742-0003 կադաստրային ծածկագրով 8.879 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

է/05-063-0750-0002 կադաստրային ծածկագրով 5.121 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

ը/05-063-0742-0002 կադաստրային ծածկագրով 10.0 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը, որի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը կազմում է՝ 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

2. Ներկայացնել Գեղարքունիքի մարզպետին սահմանված կարգով եզրակացություն ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի «դ» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 28.12.2023թ. թիվ 910-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող, Պ. Սևակի փող., 91/2 հասցեում գտնվող 0,001355 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը և նույն հողամասի վրա գտնվող 11.98 քմ ներքին և 13.55 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Հովսեփ Բոզանյանին:
2. Քաղաքացի Հովսեփ Բոզանյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 4600 /չորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, իսկ շինության /տնտեսական շինություն/ համար համայնքի վարչական բյուջե՝ 900185061232 հաշվեհամարին վճարել 10100 /տասը հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՍԵՓ ԲՈԶԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 62-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող, Պ. Սևակի փողոց, թիվ 91/1 հասցեում գտնվող 0,00349 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Հովսեփ Բոզանյանին, քանի որ նշված

հողամասի վրա կառուցված է Հովսեփ Բոզանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը:

2. Քաղաքացի Հովսեփ Բոզանյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 11800 /տասնմեկ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ԱՎՏՈՏՆԱԿԸ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի «դ» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 03.12.2024թ. թիվ 1372-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող Տ. Մեծի փող., 11/1 /ավոտնակ/ հասցեում գտնվող /վկայական 16122024-05-0043/ 05-002-0101-0082 կադաստրային ծածկագրով 0.00449 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը և նույն հողամասի վրա գտնվող օրինականացված 34.65 քմ ներքին և 44.9քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը/ ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Գեղամ Գևորգյանին:
2. Քաղաքացի Գեղամ Վաղարշակի Գևորգյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 15 200 /տասնհինգ հազար երկուհարյուր/ ՀՀ դրամ, իսկ շինության /ավտոտնակ/-ի համար համայնքի վարչական բյուջե 900185061232 հաշվեհամարին վճարել 33 400 /երեսուն երեք հազար չորսհարյուր / ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՒԲԻԿ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 62-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող, 05-002-0079-0035 կադաստրային ծածկագրով 0,00252 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Ռուբիկ Լազարյանին, քանի որ նշված հողամասի վրա կառուցված է Ռուբիկ Լազարյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը:
2. Քաղաքացի Ռուբիկ Լազարյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 8500 /ութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ՄԱՌԱՆ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի «դ» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 17.02.2025թ. թիվ 84-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող, Գ. Նժդեհի փող., 103/12 հասցեում գտնվող 0,00129 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը և նույն հողամասի վրա գտնվող օրինականացված 11.01 քմ ներքին և 12.9 քմ արտաքին

մակերեսով մառանը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Ռուդիկ Սարիբեկյանին:

2. Քաղաքացի Ռուդիկ Սարիբեկյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝ 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 4500 /չորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, իսկ շինության /մառան/ համար համայնքի վարչական բյուջե՝ 900185061232 հաշվեհամարին վճարել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանասական ներդրումները կատարելու պայմանով 2025թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել մասնակցելու «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Գետիկ բնակավայրի արտաքին ջրագծի և ջրընդունիչների վերակառուցում» և « ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում ՕԿՋ-ի և ՕԿՋ-ին կից ոռոգման համակարգի կառուցում» ծրագրին:
2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Գետիկ բնակավայրի արտաքին ջրագծի և ջրընդունիչների վերակառուցում» և « ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքում ՕԿՋ-ի և ՕԿՋ-ին կից ոռոգման համակարգի կառուցում» ծրագրի ֆինանսական հայտը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2025 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրումներ կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց: Շ
2. Ճամբարակ համայնքի 2025թ-ին բյուջեում հատկացնել 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել երիտասարդության հետ կապված և մշակութային ոլորտը(ները) (կամ տարածքը)՝ որպես առաջնահերթություն*:
7. Համայնքի ղեկավարին՝
   1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
   2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
   3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

* Ավագանին կարող է չսահմանել որևէ առաջնահերթություն:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1 և 31-րդ հոդվածների 1-ին մասի 1.4, 1.8-րդ կետերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ ներառելով
   1) Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի 2026-2028 թվականների եկամուտների, ծախսերի քաղաքականության ներածական մասը, զարգացման հիմնական ուղղությունները, սկզբունքները:
   2) Ճամբարակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի 2026-2028 թվականների վարչական և ֆոնդային մասերի ճշտված եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ ըստ հավելված 1-ի:
   3) Ճամբարակ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի պակասուրդի /դեֆիցիտի/ ճշտված ֆինանսավորումը՝ ըստ աղբյուրների՝ ըստ հավելված 2-ի:
   4) Ճամբարակ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի վարչական և ֆոնդային մասերի ճշտված տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ ըստ հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի 2024թ բյուջեի կատարման հաշվետվությունն ըստ եկամուտների և ծախսերի:
2024թ-ին համայնքի ընդհանուր եկամուտները կազմել են 1.403.730.2 հազ. դրամ: Վարչական եկամուտները կազմել են 1.019.092 հազ. դրամ 1.004.581,5 հազար դրամի փոխարեն՝ կատարվելով 101,4 %, սեփական եկամուտների մասով՝ 305.496,5 հազար դրամ 289970,1 հազար դրամի փոխարեն՝ կատարելով 105.4 % ով, ըստ եկամտատեսակների՝

•Գույքային հարկեր անշարժ գույքից – 44.167,0 հազար դրամ՝ որից
ա/ գույքահարկ շենք-շինությունների համար –8.7 հազար դրամ
բ/ հողի հարկ – 9.938,8 հազար դրամ գ/ անշարժ գույքի հարկ 34.219,5 հազար դրամ
•Գույքային հարկեր փոխադրամիջոցներից – 72.417,0 հազար դրամ
•Տեղական տուրքեր 8.741,4 հազար դրամ
•Պարտադիր վճարներ 1.269,4 հազար դրամ
•Այլ Եկամուտներ հազար դրամ 178.901,7 որից՝
ա/ հողերի վարձակալություն - 53043,8 հազար դրամ
բ/ այլ գույքի վարձակալություն – 3741,4 հազար դրամ
գ/ տեղական վճարներ – 47980,1 հազար դրամ
դ/ տույժեր ու տուգանքներ - 2000 հազար դրամ
ե/ այլ ոչ հարկային եկամուտներ – 71774,6 հազար դրամ:
2024թ բյուջեի վարչական և ֆոնդային ծախսերը կազմել են 1.365.378,4 հազար դրամ, որից՝

•Կառավարման ապարատ 268.644.8 հազ. դրամ
•Ճամբարակի ՔԿԱԳ 3886.5 հազ. դրամ
•Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 213549.8 հազ. դրամ
•Պաշտպանություն 853,2 հազ. դրամ
•Գյուղատնտեսություն 92883,6 հազ. դրամ
•Ճանապարհաշինություն 100471.3 հազ. դրամ
•Փողոցների լուսավորվածություն 128736.3 հազ. դրամ
•Կոմունալ տնտեսություն 111971.1
•Ջրամատակարարում 229090.2 հազ. դրամ
•Հանգիստ և սպորտ, մշակույթ 13837.1 հազ. դրամ
•Համակարգչային ծառայություններ 2098,4 հազ. դրամ
•մշակութային ծառայություններ 22234,3 հազ. դրամ
•Մանկապարտեզներ 206371,4 հազ. Դրամ
•Տարրական ընդհանուր կրթություն 1080 հազ. դրամ
•Արտադպրոցական դաստիարակություն 44861.6 հազ. դրամ
•Սոցիալական պաշտպանություն 5064,0 հազ. դրամ:

2024թ տարեսկզբին վարչական բյուջեի մնացորդը կազմել է 13290,4 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 7512,8 հազար դրամ:
Տարեվերջին վարչական բյուջեի մնացորդը կազմել է 23831,5 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 19767,3 հազար դրամ:
2024թ տարեվերջին բյուջեի ընդհանուր մնացորդը կազմել է 43598,8 Հազար դրամ, որը տեղափոխվել է 2025թ ֆոնդային բյուջե:

2024թ բյուջետային տարվա ընթացքում վարչական բյուջեից ֆոնդային բյուջե հատկացվել է 253505 հազար դրամ, իսկ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները կազմել են 384.638,3 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՏՈՌՆԱԴՈ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԵԾԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՐՁԱՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով ՀՀ նկարիչների միության հեղինակավոր անդամներից և Համայնքի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կարծիքը և առաջարկը, 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրում տեղադրվելիք «Տոռնադո» պատկերով հուշարձանի չափերը մեծացվել է՝ (քանդակի ստորին մասի լայնությունը 1,9մ-ից 2,3մ, վերին մասի լայնությունը՝ 3,7մ-ից 4,5մ, իսկ բարձրությունը՝ 5մ-ից 6,3մ), ծավալների մեծացման արդյունքում արձանի արժեքը ըստ ներկայացված նախահաշվի ավելանում է 15,9 մլն դրամով, հաշվի առնելով արձանի 3D մոդելավորմամբ սքանավորմամբ կատարված ծավալների հաշվարկները, հաձնաժողովի եզրակացություններն ու առաջարկները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի բյուջեից «Տոռնադո» հուշարձանի ձեռքբերման նպատակով հատկացնել ևս 15 900 000 (տասնհինգ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ավագանու 19 փետրվարի 2025թ.-ի N 9-Ա որոշումը: 3
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի

(10-րդ հոդվածը լրաց. 05.04.00 ՀՕ-50, 30.04.08 ՀՕ-55-Ն, 08.12.11 ՀՕ-353-Ն, 21.03.12 ՀՕ-95-Ն) 11-րդ կետի պահանջները, ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները և մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել արտոնություններ հետևյալ չափերով՝

Հ/Հ	Անուն, ազգանուն	Հողի/գույքի գտնվելու հասցեն	Արտոնության տեսակը	Մայր գումար /ՀՀ դրամ/	Տույժ /ՀՀ դրամ/
1.	Հրաչիկ Հարությունյան	ք. Ճամբարակ	Հողի հարկ	0	14454

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅԲՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝
   1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
   2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հանրային լսումների արձանագրությունները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Մ.Վ.Ա ԷԼԵԿՏՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի վարչական տարածքում, 20-րդ փողոց, 70 հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի ընդլայնման աշխատանքների համար տալ համաձայնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հանրային լսումների արձանագրությունները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐՓԱՇՈՂ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սևան-Վարդենիս խճուղի 48-րդ կմ Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրի ափամերձ տարածք, 4 հողամաս հասցեում հանգստյան գոտու կառուցման աշխատանքների համար տալ համաձայնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օր սահմանել 2025 թվականի ապրիլի 22-ը, ժամը 15:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

Ավագանու անդամներ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՕՀԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՋԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԵՎԱԿ ՋԱՌԱՀՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՆԱԴԱՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՎԻԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ՋԱՀԱՆԳԻՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը

_____